

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

«___» «_____» 2022 թվականի

N ___-Ա

ՈՐՈՇՈՒՄ

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի
N10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի «Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կառուցվածքը, հաստիքացուցակը, աշխատակիցների թվաքանակը, Երևանի քաղաքապետի, նրա տեղակալների, խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, վարչական շրջանների ղեկավարների, ղեկավարների տեղակալների, վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի հունիսի 16-ի N16-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 10-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) N1 հավելվածում «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի 3-րդ կետի 7-րդ ենթակետը ճանաչել ուժը կորցրած:

2) N1 հավելվածում «II. Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի «Երևանի Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի», «Երևանի Ավան վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի», «Երևանի Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի», «Երևանի Դավթաշեն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի», «Երևանի Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի», «Երևանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի», «Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի», «Երևանի Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի», «Երևանի Նորք-Մարաշ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի», «Երևանի Նուբարաշեն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի», «Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի», «Երևանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի» գլուխների 1-ին կետերի 4-րդ ենթակետերը ճանաչել ուժը կորցրած:

3) N2 հավելվածում «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Իրավաբանական վարչություն» գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

	Իրավաբանական վարչություն				
1	վարչության պետ	1	697,000		697,000
2	վարչության պետի տեղակալ	2	561,000		1,122,000
3	գործավար	1	248,200		248,200
-	Իրավական ակտերի մշակման և փորձաքննության բաժին				
4	բաժնի պետ	1	408,000		408,000
5	գլխավոր մասնագետ	2	289,000		578,000
6	առաջատար մասնագետ	2	282,200		564,400
7	առաջին կարգի մասնագետ	2	272,000		544,000
	Ստորաբաժանումներում և համայնքային ենթակայության կազմակերպություններում իրավաբանական աշխատանքների համակարգման բաժին				
	բաժնի պետ	1	408,000		408,000
	գլխավոր մասնագետ	1	289,000		289,000
	առաջատար մասնագետ	1	282,200		282,200
	առաջին կարգի մասնագետ	1	272,000		272,000
-	Վարչական բողոքների ուսումնասիրության բաժին				
16	բաժնի պետ	1	408,000		408,000
17	գլխավոր մասնագետ	2	289,000		578,000
18	առաջատար մասնագետ	3	282,200		846,600
19	առաջին կարգի մասնագետ	2	272,000		544,000
-	Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննության բաժին				
20	բաժնի պետ	1	408,000		408,000
21	գլխավոր մասնագետ	2	289,000		578,000
22	առաջատար մասնագետ	5	282,200		1,411,000
23	առաջին կարգի մասնագետ	2	272,000		544,000
-	Դատական գործերի վարման բաժին				
8	բաժնի պետ	1	408,000		408,000
9	գլխավոր մասնագետ	4	289,000		1,156,000
10	առաջատար մասնագետ	5	282,200		1,411,000

11	առաջին կարգի մասնագետ	1	272,000		272,000
-	Հարկադիր գանձման և պարտավորությունների կատարման ապահովման բաժին				
24	բաժնի պետ	1	408,000		408,000
25	գլխավոր մասնագետ	4	289,000		1,156,000
26	առաջատար մասնագետ	6	282,200		1,693,200
27	առաջին կարգի մասնագետ	3	272,000		816,000
	ԸՆԴԱՄԵՆԸ	58			18,050,600

»:

4) N2 հավելվածում «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննության բաժին» տողը ճանաչել ուժը կորցրած:

5) N2 հավելվածում «II. Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի «Երևանի վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի աշխատակիցներ» գլխում 2.1-2.12 կետերում «

3	Աշխատակազմի քարտուղար	1	527,000		527,000
---	-----------------------	---	---------	--	---------

»

կետից հետո լրացնել նոր 3.1 ենթակետերով.

«

3.1	գլխավոր մասնագետ-իրավաբան	1	323,000		323,000
-----	---------------------------	---	---------	--	---------

»:

6) N2 հավելվածում «II. Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի «Երևանի վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի աշխատակիցներ» գլխում 2.1-2.12 կետերի «Իրավաբանական բաժին» տողերը ճանաչել ուժը կորցրած,

7) «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Ամբողջը՝ Երևանի քաղաքապետարան» տողում «684.5» և «226,872,600» թվերը փոխարինել համապատասխանաբար «702.5» և «232,033,800» թվերով,

8) «2.1 Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ» գլխի «Ամբողջը» տողում «109» և «31,392,200» թվերը փոխարինել համապատասխանաբար «104» և «29,913,200» թվերով,

9) «2.2. Ավան վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ» գլխի «Ամբողջը» տողում «86» և «25,238,200» թվերը փոխարինել համապատասխանաբար «82» և «24,058,400» թվերով:

10) «2.3. Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ» գլխի «Ամբողջը» տողում «151» և «42,846,800» թվերը փոխարինել համապատասխանաբար «145» և «41,095,800» թվերով,

11) «2.4. Դավթաշեն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ» գլխի «Ամբողջը» տողում «69» և «20,515,600» թվերը փոխարինել համապատասխանաբար «66» և «19,607,800» թվերով,

12) «2.5. Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ» գլխի «Ամբողջը» տողում «114» և «32,595,800» թվերը փոխարինել համապատասխանաբար «109» և «31,144,000» թվերով,

13) «2.6. Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ» գլխի «Ամբողջը» տողում «186» և «52,747,600» թվերը փոխարինել համապատասխանաբար «179» և «50,731,400» թվերով,

14) «2.7. Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ» գլխի «Ամբողջը» տողում «130» և «37,383,000» թվերը փոխարինել համապատասխանաբար «126» և «36,203,200» թվերով,

15) «2.8. Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ» գլխի «Ամբողջը» տողում «127» և «36,417,400» թվերը փոխարինել համապատասխանաբար «121» և «34,666,400» թվերով,

16) «2.9. Նորք Մարաշ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ» գլխի «Ամբողջը» տողում «54» և «16,279,200» թվերը փոխարինել համապատասխանաբար «52» և «15,653,600» թվերով,

17) «2.10. Նուբարաշեն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ» գլխի «Ամբողջը» տողում «34» և «10,971,800» թվերը փոխարինել համապատասխանաբար «34» և «11,005,800» թվերով,

18) «2.11. Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ» գլխի «Ամբողջը» տողում «126» և «35,890,400» թվերը փոխարինել համապատասխանաբար «122» և «34,710,600» թվերով,

19) «2.12. Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ» գլխի «Ամբողջը» տողում «115» և «32,925,600» թվերը փոխարինել համապատասխանաբար «111» և «31,735,600» թվերով,

20) «Ամբողջը՝ վարչական շրջաններ» տողում «1301» և «375,203,600» թվերը փոխարինել համապատասխանաբար «1251» և «360,525,800» թվերով,

21) «Ամբողջը՝ առանձնացված ստորաբաժանումներ» տողում «1340» և «387,770,000» թվերը փոխարինել համապատասխանաբար «1290» և «373,092,200» թվերով,

22) «Ամբողջը» տողում «2024.5» և «614,642,600» թվերը փոխարինել համապատասխանաբար «1992.5» և «605,126,000» թվերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի համապատասխան իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու 29.10.2018 թվականի թիվ 10-Ա որոշմամբ հաստատվել է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակը, որի համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանում է հանդիսանում իրավաբանական վարչությունը, վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննության բաժինը, իսկ առանձնացված ստորաբաժանումներ հանդիսացող Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերում առկա են իրավաբանական բաժիններ:

Նշված ստորաբաժանումները միասին ունեն թվով 102 հաստիքներ, այդ թվում՝

1. իրավաբանական վարչություն – 28,
2. վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննության բաժին – 12,
3. վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի իրավաբանական բաժիններ՝ 62:

Վերը նշված ստորաբաժանումների կողմից իրականացվում են իրենց կանոնադրություններով, Երևան քաղաքի ավագանու և Երևանի քաղաքապետի որոշումներով իրենց վրա դրված պարտականությունները, որոնցից հիմնականներն են հանդիսանում՝

1. իրավական ակտերի նախագծերի մշակումը և փորձաքննության իրականացումը,
2. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մյուս ստորաբաժանումներին և համայնքային ենթակայության կազմակերպություններում գործունեության ընթացքում իրավական օժանդակության ցուցաբերումը,
3. վարչական (վերադասության կարգով ներկայացված) բողոքների ուսումնասիրությունը,
4. դատական գործերի վարումը,
5. վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննությունը,
6. Երևան համայնքի հանդեպ առկա պարտավորությունների հարկադիր գանձման և պարտավորությունների կատարման ապահովումը,
7. խնամակալության և հոգեբարձության հետ կապված գործառույթներ:

Հարկ է նշել, որ բոլոր դեպքերում վերը թվարկված ստորաբաժանումների գործառույթները կրկնվում են, բացառությամբ խնամակալության և հոգեբարձության հետ կապված հարցերի, որոնք իրականացվում են միայն վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերում, մասնավորապես՝ բոլոր ստորաբաժանումների կողմից մշակվում են իրավական ակտերի նախագծեր, բոլորի կողմից այլ ստորաբաժանումներին տրամադրվում են իրավական օժանդակություն, քննվում են վարչական բողոքներ, վարվում են դատական գործեր, իսկ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննություն

իրականացնում են վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերում և վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննության բաժնում:

Նույն գործառույթի տարբեր ստորաբաժանումներին իրականացնելու արդյունքում առաջանում են բազմաթիվ խնդիրներ, մասնավորապես՝ առկա չէ գործընթացի իրականացման վերջնական պատասխանատու, նույն անձից պարտավորությունների գանձման վրա մի քանի ստորաբաժանման կողմից իրարից անկախ հարուցվում են վարչական վարույթներ, այսինքն՝ ծախսվում է կրկնակի, որոշ դեպքերում՝ եռակի և քառակի ռեսուրս, տարբեր ստորաբաժանումների կողմից իրավական կարգավորումները կիրառվում են տարբեր մեկնաբանությամբ և այլն, բացի այդ՝ հնարավոր չի լինում ապահովել անհրաժեշտ հսկողությունը 14 առանձին և ինքնուրույն գործող ստորաբաժանման (իրավաբանական վարչություն, վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննության բաժին և 12 վարչական շրջանի իրավաբանական բաժիններ) նկատմամբ:

Վերը նշվածից բխում է, որ ներկայումս իրավական ոլորտի կառավարումը և իրավական աշխատանքները իրականացվում են ոչ օպտիմալ տարբերակով, ինչի արդյունքում առաջանում են խնդիրներ, թե Երևան համայնքի համար, թե Երևան համայնքի բնակչության և համայնքի տարածքում գործունեություն իրականացնող տնտեսվարողների համար: Բացի այդ, գործառույթների կրկնության և նույն գործառույթի կապակցությամբ տարբեր ստորաբաժանումների վարույթների իրականացման արդյունքում կարիք է առաջացել լրացուցիչ հաստիքների, որոնք միավորման դեպքում կարող են կրճատվել, այսինքն՝ տվյալ նախագծով առաջարկվում է կատարել օպտիմալացում, որի արդյունքում բարելավվելու է աշխատանքների իրականացման որակը, կառավարումը և տեղի է ունենալու լրացուցիչ (ոչ անհրաժեշտ) հաստիքների կրճատում:

Նշված նպատակի իրականացման համար առաջարկվում է՝ նույն լիազորությունների իրականացման նպատակով ստեղծված 14 տարբեր ստորաբաժանումներն միավորել որպես մեկ ստորաբաժանում և քննարկված բոլոր աշխատանքները իրականացնել աշխատակազմի իրավաբանական վարչության միջոցով, բացառությամբ՝ խնամակալության և հոգեբարձության հետ կապված հարցերի, որոնք «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի կարգավորումների համաձայն հանդիսանում են վարչական շրջանի ղեկավարի լիազորությունները, այլ ոչ թե Երևան քաղաքի ավագանու կամ քաղաքապետի:

Վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերում խնամակալության և հոգեբարձության հետ կապված հարցերի քննարկան, վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի մյուս բաժիններին իրավական օժանդակության իրականացման համար առաջարկվում է յուրաքանչյուր վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմում նախատեսել 1-ական գլխավոր մասնագետ-իրավաբանի հաստիք, այսինքն՝ ընդհանուր 12 հաստիք, որի ամսական պաշտոնային դրույքաչափն առաջարկվում է սահմանել նույն աշխատակազմի բաժնի պետերի պաշտոնային դրույքաչափին հավասար՝ 323,000 ՀՀ դրամ:

Աշխատակազմի իրավաբանական վարչությունում տեղակալի և գործավարի նոր հաստիքների ավելացումներ չեն նախատեսվում, իսկ ամբողջ վերը նշված աշխատանքն առաջարկվում է իրականացնել նախկինում առկա 4 բաժնի փոխարեն թվով 6 հետևյալ բաժինների միջոցով.

1. Իրավական ակտերի մշակման և փորձաքննության բաժին (ներկայումս առկա).

2. Ստորաբաժանումներում և համայնքային ենթակայության կազմակերպություններում իրավաբանական աշխատանքների համակարգման բաժին (ներկայումս առկա).

3. Վարչական բողոքների ուսումնասիրության բաժին (ներկայումս առկա).

4. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննության բաժին (նոր առաջարկվող).

5. Դատական գործերի վարման բաժին (ներկայումս առկա).

6. Հարկադիր գանձման և պարտավորությունների կատարման ապահովման բաժին (նոր առաջարկվող):

Առաջարկվող նոր ստորաբաժանման հաստիքացուցակը կազմվել է հաշվի առնելով 2019, 2020 և 2021 թվականներին փաստացի կատարված աշխատանքների ծավալը, ինչպես նաև վարչության առջև դրվող նոր խնդիրների լուծման համար անհրաժեշտ աշխատակիցների քանակը, մասնավորապես՝

1. Իրավական ակտերի մշակման և փորձաքննության բաժին.

բաժնի կողմից ուսումնասիրվել է և եզրակացություն է տրվել 2019 թվականին՝ 6560, 2020 թվականին՝ 7021, 2021 թվականին՝ 6397 իրավական ակտի նախագծեր, այսինքն միջինը շուրջ 6660 իրավական ակտ, որից բխում է, որ յուրաքանչյուր աշխատանքային օր բաժինը իրականացրել է շուրջ 25 իրավական ակտի ուսումնասիրություն և եզրակացության տրամադրում: Նշված բաժնի կողմից իրականացվում է նաև օրենքների, կառավարության որոշումների և այլ ակտերի մշակումներ, պայմանագրերի նախագծերի կազմում և մյուս բոլոր ստորաբաժանումների կողմից կազմված պայմանագրերի վերաբերյալ եզրակացությունների տրամադրում: Նշված բաժնում նախատեսվում է լրացնել նոր հաստիք և աշխատանքները իրականացնել 7 աշխատակցի միջոցով:

2. Ստորաբաժանումներում և համայնքային ենթակայության կազմակերպություններում իրավաբանական աշխատանքների համակարգման բաժին.

նշված բաժինը ձևավորվել է 2021 թվականին դեկտեմբերին և դեռևս ամբողջությամբ կազմավորված չէ, ուստի դրա գործունեության վերաբերյալ տեղեկատվություն դեռևս առկա չէ, սակայն առկա 4 աշխատակցի միջոցով նախատեսվում է իրականացնել շուրջ 470, որից՝ դպրոց՝ 153 հատ, մանկապարտեզ՝ 154 հատ, իսկ այլ կազմակերպությունները՝ ՀՈԱԿ-ներ, ՓԲԸ-ներ, համայնքային հիմնարկներ և այլն՝ 163 հատ:

3. Վարչական բողոքների ուսումնասիրության բաժին.

նշված բաժինը նույնպես ձևավորվել է 2021 թվականին դեկտեմբերին և կրկին բաղկացած է եղել 4 հաստիքից, սակայն նախատեսվում է այն լրացնել ևս 4 հաստիքով, քանի որ այն իրականացնելու է նաև վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով կայացված վարչական ակտերի (այդ թվում՝ վճարովի ավտոկայանատեղերի հետ կապված) դեմ ներկայացված վարչական բողոքների, ինչպես նաև դրամական պահանջների վերաբերյալ կայացված վարչական ակտերի դեմ ներկայացված վարչական բողոքների ուսումնասիրություն: Հարկ է նշել, որ միայն ավտոյականատեղի հետ կապված բողոքները կազմել են 2019 թվականին՝ 2240, 2020 թվականին՝ 11256, 2021 թվականին՝ 8439 հատ, այսինքն՝ 2021 թվականին միջինը յուրաքանչյուր աշխատանքային օր 30 բողոք:

4. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննության բաժին.

բաժնի կողմից իրականացվելու է վարչական իրավախախտումների վերաբերյալ կազմված արձանագրությունների հիման վրա վարչական վարույթներ և կայացվելու են համապատասխան որոշումներ, հարկ է նշել, որ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ստորաբաժանումների և վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի կողմից կազմվել են 2019 թվականին՝ 4176, 2020 թվականին՝ 3630, 2021 թվականին՝ 3668 արձանագրություններ, այսինքն՝ միջինը՝ 3825: Առկա իրավիճակի պահպանման դեպքում յուրաքանչյուր աշխատանքային օր բաժինը իրականացրել է շուրջ 14 արձանագրության հիման վրա վարչական վարույթի իրականացում, բացի այդ՝ պետք է ավարտին հասցնել ներկայումս հարուցված և ընթացքի մեջ գտնվող 4201 վարչական վարույթ: Նշված աշխատանքները նախատեսվում է իրականացնել 7 աշխատակցի միջոցով, իսկ մյուս 3 աշխատակիցը իրականացնելու են նշված վարչական իրավախախտումների բողոքարկման դեպքում Երևան համայնքի շահերի ներկայացումը դատարաններում, մասնավորապես՝ ներկայումս առկա շուրջ 600 հատ դատական գործի վարումը:

5. Դատական գործերի վարման բաժին.

բաժնի կողմից իրականացվել և շարունակվելու է իրականացվել Երևան համայնքի մասնակցությամբ ներկայումս առկա ավելի քան 1.800 հատ դատական գործով (Երևան համայնքի մասնակցությամբ բոլոր գործերը՝ ինքնակամ շինությունների օրինականացման, շինարարական թույլտվությունների բողոքարկման, պարտավորեցման հայցերի և այլնի հետ կապված, նշված թիվը չի ներառում վճարովի ավտոկայանատեղերի, վարչական իրավախախտումների և դրամական պահանջների գանձման հետ կապված դատական գործերը): Բաժինը նախատեսվում է կազմակերպել 11 աշխատակցի միջոցով, այսինքն՝ յուրաքանչյուր աշխատակցի համար նախատեսվում է միջինը շուրջ 180 դատական գործի վարելու աշխատանք՝ կապված գործի բարդության աստիճանից: Հարկ է նշել, որ Երևան համայնքի դեմ ներկայացվող դատական հայցերի ծավալը չի նվազում, մասնավորապես՝ 2019 թվականին՝ 815 հատ, 2020 թվականին՝ 825 հատ, 2021 թվականին՝ 913 հատ ստացված կամ ներկայացված հայցեր: Իսկ յուրաքանչյուր դատական գործի միջին տևողությունը շուրջ 3-4 տարի է:

6. Հարկադիր գանձման և պարտավորությունների կատարման ապահովման բաժին.

նշված բաժինն առաջարկվում է կազմակերպել 14 աշխատակցից, որոնք պետք է ավարտին հասցնեն ներկայումս վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերում հարուցված դրամական պահանջներով 12085 վարույթ (անշարժ գույքի հարկի և աղբահանության վճարի գանձման վերաբերյալ), ինչպես նաև տարեկան իրականացնել շուրջ 35000 ժամկետանց պարտավորության գանձման վարույթներ, յուրաքանչյուր օր՝ շուրջ 100 հատ: Բացի այդ՝ շարունակեն 324 սնանկության գործի վարումը, միջոցներ ձեռնարկեն շուրջ 15.000 հատ ժամկետանց վարձակալության վճարի մասով առկա պարտավորության գանձման ուղղությամբ, ինչպես նաև ապահովել հարկադիր կատարման վարույթում գտնվող շուրջ 60.000 (որից շուրջ 44.000 գործ վճարովի ավտոկայանատեղերի հետ կապված, այդ թվում՝ 2018 թվականի՝ 4.262, 2019 թվականի՝ 7.477, 2020 թվականի՝ 16.450 և 2021 թվականի՝ 15.706), 1.650 վարչական իրավախախտումների հետ կապված, իսկ շուրջ 14.500

անշարժ գույքի հարկի և աղբահանության վճարի հետ կապված) վարույթների և նոր վարույթների կատարման ընթացքը: Միաժամանակ նախատեսվում է, որ սույն բաժինը իրականացնելու է նաև իր կողմից իրականացված վարչական վարույթների արդյունքում կայացված վարչական ակտերի բողոքարկման դեպքում Երևան համայնքի շահերի ներկայացումը դատարաններում, մասնավորապես՝ ներկայումս առկա շուրջ վճարովի ավտոկայանատեղերի հետ կապված՝ շուրջ 2.000 հատ և դրամական պահանջների գանձման հետ կապված շուրջ 400 հատ դատական գործերի վարումը: Բացի այդ՝ դրամական պահանջների գանձման հետ կապված ներկայումս կատարվող շուրջ 12.000 վարչական վարույթի փոխարեն, ինչպես նշվեց, նախատեսվում է իրականացնել տարեկան 35.000 վարչական վարույթ, ուստի կանխատեսվում է, որ դատական գործերի թիվը ավելանալու է ևս 1.200 հատով:

Վերը նշված նոր կազմակերպվող ստորաբաժանումը ընդհանուր ունենալու է 58 աշխատակից նախկինում առկա հաստիքների համեմատությամբ հետևյալ համամասնությամբ՝

Պաշտոն	Առկա հաստիքների քանակ	Առաջարկվող հաստիքների քանակ	Պաշտոնային և դրույքաչափ	Փաստացի աշխատավարձ	Առաջարկվող աշխատավարձ
Վարչության պետ	1	1	697,000	697,000	697,000
Վարչության պետի տեղակալ	2	2	561,000	1,122,000	1,122,000
Գործավար	1	1	248,200	248,200	248,200
Ինքնուրույն բաժնի պետ	1	0	442,000	442,000	0
Վարչության բաժնի պետ	4	6	408,000	1,632,000	2,448,000
Վ.Շ. բաժնի պետ	11	0	387,600	4,263,600	0
գլխավոր մասնագետ	27	15	289,000	7,803,000	4,335,000
առաջատար մասնագետ	27	22	282,200	7,619,400	6,208,400
առաջին կարգի մասնագետ	28	11	272,000	7,616,000	2,992,000
Վ.Շ. նախատեսվող նոր հաստիք	0	12	323,000	0	3,876,000
Ընդհանուր	102	70		33.245.200	21.926.600

Առաջարկվող փոփոխության արդյունքում տեղի են ունենալու հետևյալ փոփոխությունները՝

Կրճատվող հաստիքների քանակ	32	31%
---------------------------	----	-----

Ներկայումս կատարվող ամսական ծախս	31,443,200	
Ներկայումս կատարվող տարեկան ծախս	377,318,400	
Նախատեսվող ամսական ծախս	21,926,600	
Նախատեսվող տարեկան ծախս	263,119,200	
Կրճատվող ամսական ծախս	9,516,600	30%
Կրճատվող տարեկան ծախս	114,199,200	30%

Վերը նշվածից բխում է, որ առաջարկվող փոփոխության ընդունման դեպքում տարեկան ավելին քան 114.000.000 ՀՀ դրամ գումար տնտեսվելու է նույն գործառույթն առավել որակյալ իրականացնելու պայմաններում, այսինքն՝ տեղի է ունենում օպտիմալացում, որի արդյունքում նույն գործառույթը իրականացվելու է ռեսուրսների առավել ճիշտ բաշխմամբ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՄՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում ծախսերի էական փոփոխություն չի նախատեսվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ